ԿՈՄԻՏԱՍԻ ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Արվեստի վաստ. գործիչ Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կոմիտասի գործունեության հիմնական վայրը, ինչպես հայտնի է, եղել է Էջմիածինը, ուր նա ապրել, ուսում է առել (ավարտելով Գևորգյան ճեմարանի լրիվ դասընթացը) և ապա անցել աշխատանքի։ Որպես մանկավարժ, երգիչ-կատարող, խմբավար, երաժիշտ-ազգագրագետ, կոմպոզիտոր և երաժշտագետ նա այստեղ է ծավալել իր գործունեությունը։ Մասնագիտական բարձրագույն կրթությունն ավարտելուց հետո նա դարձյալ այստեղ է վերադարձել Բեռլինից և շարունակել իր աշխատանքը մինչև 1910 թ., երբ ստիպված եղավ թողնել Էջմիածինը և մեկնել Կոստանդնուպոլիս, որտեղ և ընթացավ նրա գործունեության վերջին շրջանը։

Այսպիսով, 1881 թ. մինչև 1910 թ. նա ամուր թելերով կապված էր բուն Հայաստանի հետ և միայն ամենաանհրաժեշտ դեպքերում է բացակայել Էջմիածնից (1896—1899 թթ. սովորել է Բեռլինում, 1901 թ. մասնակցել է Միջազգային երաժշտական ընկերության Բեռլինի կոնգրեսին, 1906—1907 թթ. Բեռլինում զբաղվել է «Հայ քնար» տետրի հրատարակության հարցերով, ապա Փարիզում հանդես է եկել համերգ-դասախոսություններով, շրջել է Շվեյցարիայի քաղաքները, երգչախմբեր կազմել ու համերգներ է տվել, այցելել է Վենետիկի Մխիթարյանների սուրբ Ղազար վանքը, աշխատել ձեռագրատանը և հանդես եկել համերգ-դասախոսությամբ, 1905 թ. Թիֆլիսում և 1908 թ. Բաքվում տվել է համերգներ)։ Այս բացակայություններից հետո նա ամեն անգամ վերադարձել է Էջմիածին և ձգտել հնարավորին չափ արդյունավետ կերպով օգտագործել իր ուժերը՝ առաջ տանելով տարբեր ուղղություններով սկսած իր ստեղծագործական ու գիտահետազոտական աշխատանքները։

Սակայն իր ուղևորություններից վերադառնալով Էջմիածին, Կոմիտասը հետզհետե ավելի սուր կերպով է զգացել միջավայրի սահմանափակությունն ու հեղձուցիչ մթնոլորտը։ Հատկապես կաթողիկոս Խրիմյան Հայրիկի մահից հետո (1908 թ.) նրա գրությունն ավելի ծանրացավ, որովհետև այլևս չկար կաթողիկոսի հովանավորությունը և գործի գլուխ էին կանգնել մարդիկ, որոնք ամեն կերպ աբգելակում էին Կոմիտասի և նրա ընկերների գործունեությունը։ Հետագեմ հոգևորականությունն առաջ էլ ծաղրում էր սեր ու յար երգող վարդապետին, իսկ այժմ, գործի գլուխ անցնելով, ավելի բացահայտ կերպով էր արտահայտում իր թշնամանքը։ Իսկ կաթողիկոսի տեղապահ Սուրենյանցը, ինչպես և կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանը, ենթարկվելով նրանց ազդեցությանը, չէին կարող և չցանկացան դիմադրավել նրանց, չհասկացան Կոմիտասի կատարած գործի մեծությունը, չընդառաջեցին Էջմիածնում երաժշտանոց ստեղծելու Կոմիտասյան նախագծին ու միջոցներ չտրամադրեցին դրա իրագործմանը։

Այս բոլորը ցայտուն կերպով իր արտացոլումն է գտել Մարգարիտ Բաբայանին և Արշակ Չոպանյանին գրած Կոմիտասի նամակներում և այն դի-

մում-հրաժարականի մեջ, որ Կոմիտասը գրեց կաթողիկոսին 1909 թ. սեպտեմբերի 5-ին և մնաց անպատասխան։ Այս տարիներին գրած նամակներում բազմիցս անդրադառնալով վերը նշված մարդկանց, նա հատկապես ընդգծում էր, որ նրանք ամեն կերպ աշխատում են իրեն և իր ընկերներին «վարկաբեկել զզվելի ստախոսություններով, աշակերտներին հուզելով, անլսելի զրպարտություններ բարդելով»։ Այս խոսքերը քաղված են 1909 թ. ապրիլի 15-ին Ա. Չոպանյանին գրած նամակից[1], որի շարունակության մեջ կարդում ենք. «Շատ կարող է պատահել նույնիսկ, որ մի խումբ, և այն ստվար և կարող միաբաններ, չդիմանալով հալածանքների՝ հեռանան վանքից»։ Կոմիտասն այլևս չէր կարող տոկալ ու համբերել, որովհետև, ինչպես ինքն է գրում նույն նամակում, «...այս դժոխային մեքենայությունները սիրտս ու միտքս հանգիստ չեն թողնում, որ կարողանամ ստեղծել»։ Նույն նամակի շարունակության մեջ Կոմիտասը դրել է իր սրտի ամբողջ դառնությունը. «Լավ է այսքանով գոցեմ գիրս. սիրտս լցված է. եթե համաչեմ լաց լինելու՝ ցավերս շատացել են։ Տես աչքովդ, թե ինչպես մարդիկ ավերում, կործանում են պատիվ, անուն, եկեղեցի, սրբություն, ազգայնություն և գործիք են դառնում չարի ձեռքին և ապա մի՛ լցվիր, մի՛ լար, մի՛ ողբա խորենացու պես, իր իսկ ողբով. այժմ նույն պատկերն է մեր շուրջը և նորա ուրվականն է ողբում մեր անբուժելի ցավերը»։

Եթե սրան ավելացնենք Կոմիտասի գիմում-հրաժարականի այն խոսքերը, թե՝ «ինյարդերս թուլացել են, այլևս տոկալու հնար չունեմ։ Որոնում եմ հանգիստ՝ չեմ գտնում, ծարավի եմ ազնիվ աշխատանքի՝ խանգարվում եմ, փափագում եմ հեռու մնալ, խցել ականջներս՝ չլսելու համար, գոցել աչքերս՝ չտեսնելու համար, կապել ոտքերս՝ չգայթակղվելու համար, բայց չի մարդ եմ. չեմ կարողանում։ Խիղճս մեռնում է, եռանդս պաղում է, կյանքս մաշվում է և միայն վարանմունքն է բուն դնում հոգուս ու սրտիս խորքում»[2],— ապա միանգամայն պարզ կդառնան Կոմիտասի ապրած ամբողջ ողբերգությունը և այն շարժառիթները, որոնք ի վերջո ստիպեցին նրան վճիռ ընդունել էջմիածնից հեռանալու և գործունեության նոր վայր ընտրելու վերաբերյալ։

Այդ տեղի ունեցավ 1910 թ. գարնանը։ Կոմիտասը մեկնեց Կոստանդնուպոլիս, որտեղ նրան ընդունեցին գրկաբաց և ամեն կերպ օգնեցին նրա գործունեության ծավալմանը։ Այստեղ նա շրջապատված էր մշտական գուրգուրանքով, գտնվում էր ամենքի ուշադրության կենտրոնում։ Այն, ինչ չէր հաջողվել իրագործել էջմիածնում, այստեղ կարծեք թե ուներ իրագործման ռեալ հնարավորություն։ Խոսքը վերաբերում է հայկական երաժշտանոցի ստեղծմանը, ինչպես և մշտական խառը երգչախումբ ունենալուն։ Երաժշտանոցի հիմնադրման համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով, կազմակերպվեցին համերգ-դասախոսություններ, որոնցից գոյացած հասույթը հատկացվում էր երաժշտանոցի ֆոնդին։ Հայկական թերթերը բազմիցս անդրադառնում էին այդ հարցին և նրա շուրջը նախապատրաստում էին հասարակական կարծիք։ Սակայն հայկական երաժշտանոց ստեղծելու վերաբերյալ Կոմիտասի փայփայած ծրագիրն այնպես էլ մնաց չիրագործված, որովհետև օսմանյան կա-

---

1 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 257—259։

2 Կոմիտասի գիմում-հրաժարականը գրված է 1909 թ. սեպտեմբերի 5-ին, կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանին։ Սևագիրը գտնվում է Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի երաժշտության բաժնի կոմիտասյան ֆոնդում։

ռավարությունը չէր կարող հանդուրժել, որ հայերն ունենան իրենց կոնսերվատորիան, երբ այդպիսին չուներ պետությունը։

Ինչ վերաբերում է մշտական երգչախումբ ունենալուն, ապա այն իրագործվեց շատ շուտով։ Հենց 1910 թ. աշնանը կազմակերպվեց «Գուսան» երգչախումբը, որը Կոմիտասի հմուտ ղեկավարությամբ կարճ ժամանակում դարձավ աչքի ընկնող գեղարվեստական կոլեկտիվ և որի համերգներն արժանացան ոչ միայն հայերի, այլև օտարերկրացիների բացառիկ խանդավառ ընդունելությանը։

Կոմիտասն այս տարիներին ծավալեց եռուն գործունեություն, զբաղվեց համերգներով ու դասախոսություններով, գրեց ու հրապարակեց հոդվածներ՝ նվիրված հայ երաժշտության պատմության ու տեսության հարցերին, կազմակերպեց ներդաշնակագիտության ուսումնասիրության դասընթացներ, որտեղ ներգրավեց իր երգչախմբի ամենաընդունակ սաներին, շարունակեց իր գիտահետազոտական աշխատանքներն ինչպես խազագիտության, նույնպես և հայ ժողովրդական երաժշտության առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ։ Նա զբաղված էր օր ու գիշեր, բայց հայրենի երկրի կարոտը հետզհետե ավելի ուժեղ կերպով էր նրան ձգում։ Նա շատ էր ցանկանում լինել Հայաստանի տարբեր շրջաններում, շփվել հարազատ ժողովրդի հետ, ձայնագրել նորանոր ժողովրդական երգեր։ Իր հետազոտական աշխատանքների կապակցությամբ շատ սուր կերպով զգում էր էջմիածնի մատենադարանի պակասը։ Բացի այդ, նրան շատ էր հետաքրքրում վանքի և իր ընկերների վիճակը։

Ահա այս բոլորը նրան ստիպեցին 1913 թ. ամռան ամիսներին ձեռնարկել իր վերջին այցելությունը Հայաստան։ Մեկնելուց առաջ, 1913 թ. հունիսի 9-ի նամակով նա այդ մասին տեղեկացրել է իր աշակերտ Սպիրիդոն Մելիքյանին և ավելացրել, թե «սպասում եմ նախարարի թույլտվության՝ Պետերբուրգեն, առանց որի կարող չեն հոգևորականները Կովկաս անցնել, արգելք չեն հարուցի, զի դեսպանի հետ աղբեր ենք եղել»[3]։ Կոստանդնուպոլսից նա ծովով հասավ Բաթում, ապա երկաթգծով մինչև Երևան ու կառքով՝ էջմիածին։ Որպես էջմիածնի միաբանության անդամ նա իր պարտքը համարեց առաջին այցելությունը տալ կաթողիկոսին (Գևորգ Ե), որը, սակայն, այլ բան չգտավ նրան հարցնելու, քան այն, թե ե՞րբ ես մեկնելու։ Կոմիտասը, որ ի ծնե ինքնասեր մարդ էր, այդ հարցը որպես վիրավորանք է ընդունում և լուռ հեռանում է կաթողիկոսի պալատից։

Այս այցելությունը նկարագրված է Կոմիտասի մտերիմ ընկերներից մեկի՝ Մ. Աբեղյանի հիշողություններում։ Ահա թե ինչ ենք կարդում այնտեղ.

«1913 թվի ամառը ես Ծաղկաձորում էի։ Լսեցի, որ Կոմիտասը Պոլսից վերադարձել է էջմիածին, ամենայն հավանականությամբ այն մտքով, որ մնա այնտեղ. բայց երբ ներկայացել էր կաթողիկոսին, վերջինս հարցրել է նրան, թե նա երբ պիտի վերադառնա Պոլիս։ Կոմիտասն այդ հարցի վրա սաստիկ զայրացել է և քիչ հետո ճանապարհ է ընկել դեպի Պոլիս։ Լսեցի և շատ ցավեցի, որ նա իսկույն ետ է գնացել, առանց իր ընկերների հետ տեսնվելու»[4]։

---

3 «Սպիրիդոն Մելիքյան», հոդվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր (ժողովածու), Երևան, 1964, էջ 155—156։

4 Մանուկ Աբեղյան, Հիշողություններ Կոմիտասի մասին, «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930։ Նույնը արտատպված է «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» ժողովածուի մեջ, Երևան, 1960, էջ 73։

Այս խոսքերում հիմնականում ճիշտ են վերարտադրված դեպքերը։ Սակայն դրանց մեջ սպրդել է մի անճշտություն։ Դա այն է, որ Կոմիտասը, թեև խիստ վիրավորված կաթողիկոսի հարցից, Պոլիս է վերադարձել ոչ թե անմիջապես, այլ Հայաստանում երկու ամիս աշխատելուց հետո։ Այդ է վկայում Կոմիտասի 1913 թ. ծոցատետրը, որի մեջ նա ձայնագրել է ժողովրդական երգեր և առաջին գրանցումը վերաբերում է հուլիսի 27-ին։ Նույն հուլիս ամսին նա այցելել է իր աշակերտ Սպիրիդոն Մելիքյանին Ղարաքիլիսայի (այժմ՝ Կիրովական) ամառանոցում. այս մասին մանրամասնորեն պատմում է Սաթենիկ Մելիքյանը իր հուշերում[5]։ Այդ են վկայում նաև նույն թվականի օգոստոսի 7-ին էջմիածնից Մ. Բաբայանին և Ա. Զոպանյանին գրած նամակները։ Վերոհիշյալ ծոցատետրին և նրա մեջ ձայնագրված ժողովրդական երգերին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ է կանգ առնել այդ նամակների վրա և պարզել, թե ի՞նչ է տեսել Կոմիտասն էջմիածնում իր այցելության ընթացքում և ի՞նչ մտքեր ու հույզեր են արթնացել նրա մեջ այդ կապակցությամբ։

Ահա դրանցից առաջինը, հասցեագրված իր աշակերտուհի օր. Մարգարիտ Բաբայանին.

«Սիրելի Մարգո ջան.

Տեսնում ես, որ էջմիածնում եմ, բայց չեմ եկել մնալու. ուզող էլ չկա, որ մնամ, այլ մատենադարանում աշխատելու և գեղջուկ երգեր հավաքելու։ Առաջին գործս վերջացրի և երկրորդն էլ վաղն եմ սկսելու և սեպտեմբերի սկզբին դառնալու եմ Կ. Պոլիս՝ իմ գործի գլխին անցնելու։

Նոր Զոպանյանից էլ նամակ եմ ստացել. գրում է, որ ջրերն է գնացել. գրում է, որ այս ձմեռվան համերգներն ու խմբականները շատ հաջող են անցել և որ շատ ընտիր երգել ես դու և քեզ հետ մասնակցողները։ Որքա՜ն ուրախ և հպարտ եմ հայի ստեղծագործության գնահատումը լսելով։ Մենք ատոնց մտքի ու սրտի զենքն էինք բանելու և ոչ թե փայտի ու մետաղի, որոնք հզորագործի հզորագար հարվածով մեկեն ջախջախվեցան. բայց մեր մտքի ու սրտի զենքն այնքան թափանցիկ, այնքան կենսունակ է, որ օտար մտքերն ու սրտերը՝ ուզեն-չուզեն պիտի ընդունեն։ Ահա այս է կենդանի զենքը, որի դինվորն եմ և ես, և դու, և բոլոր նոքա, որոնք իրենց ցեղի աղնիվ միտքն ու սիրտն են հրապարակ հանում և այնու շարժում սառն քաղաքագետի պաղ սիրտը՝ մի փոքր էլ մեր կենսունակ ու մարդկության պիտանի ժողովրդին ու աղգին նայելու, խնայելու և նորա մասին մտածելու։

Վանքը շատ խղճալի տպավորություն թողեց վրաս։ Գլուխն՝ անգլուխ, ոտքերը՝ բազմոտանի, խելքը՝ ցամաքած, գործը՝ մեռած, կիրքը՝ զարթուն... Մի բերան չասացին նույնիսկ, թե ինչո՞ւ չես մնում, ինչո՞ւ հեռացել ես վանքից... Արդեն ոսկի էլ թափեին, չէի մնալու, բայց և այնպես մարդ կարող էր զգալ, թե մի օր այստեղ գործ է կատարել և կյանք է մաշել՝ ջանք թափելով՝ անձնվիրաբար։ Վանքի երգեցողությունը դարձել է գյուղականեն ստոր. ժխոր, աղաղակ, խառնակաձայն, տգետ, ահա քեզ երգեցողություն...

Էլ նամակ չգրես, մինչև ես Կ. Պոլսից կգրեմ քեզ, դի հայ գյուղերում պիտի լինեմ և շարունակ ճանապարհորդելով ետ պիտի դառնամ»[6]։

---

5 «Սպիրիդոն Մելիքյան», հոդվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր. էջ 107—108։

6 Կոմիտասի այս նամակի ինքնագիրը գտնվում է գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասյան ֆոնդում։

Այս նույն մտքերն են շարադրված նաև Արշակ Չոպանյանին նույն օրը (1913 թ. օգոստոսի 7) դրած նամակում։ Այստեղ նույնպես Կոմիտասն ընդգծում է, որ ինքը չի եկել մնալու, «այլ միայն մատենադարանում աշխատելու և գեղջուկ երգեր հավաքելու»։ «Առաջին գործս,— ավելացնում է նա,— երեկ վերջացրի, երկրորդն եմ սկսելու վաղը։ Մինչև սեպտեմբերի կեսերը Կ. Պոլիս կլինեմ։ Վաղը կերթամ գյուղերը։ Բավական նոր բաներ են դուրս եկել»։

Այստեղ էլ Կոմիտասն անդրադարձել է հայ ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ, գիտական ու գեղարվեստական կարողությունները ցուցադրելու անհրաժեշտության հարցին և ավելացրել, թե երանի հենց սկզբից դիմեինք հոգևոր զենքին, որովհետև այն «անընկճելի ու անխորտակելի է՝ հայու սիրտն ու հոգին է իբր զենք շաչում։ Լավ է ուշ, քան երբեք։ Մանավանդ, երբ հրապարակ է ելնում հայ հանճարը՝ հայ անձերի, կազմակերպիչների, երգողների, նվագողների և խոսողների ձեռքով, արդեն զինաթափ են լինում ամեն նախապաշարմունք միանգամայն»։

Այս նամակում էլ Կոմիտասն առանձին ցավով անդրադառնում է էջմիածնի վանքի ներքին դրության հարցերին։ Ահա թե ինչ է գրում նա.

«Գալով այստեղի գործերին, ոչ մի մխիթարական բան չկա։ Գիտես, որ՝ մարդ է, որ գործէ զերկիր, իսկ Վեհին դուն ճանաչում ես անձամբ. փառասեր, փողասեր, ժլատ, ապիկար, թույլ շողոքորթություն սիրող, խաբվող, գործից բան չհասկացող, ինչ ասում են՝ կատարում է։ Նատ անմխիթարական է, խապալիք մի խումբ մարդոց ձեռքին, որոնք 1—7 պաշտոնի գլուխ են անցել, իսկ իմ ընկերներս անպաշտոն են թե՛ վանքում, թե՛ դուրս. մեկը վարժապետ է ռուսաց գիմնազիայում, մյուսը քաշված. Կարապետ սրբազանը նույնիսկ սենյակ չունի վանքում, այլ խցկվել է Հուսիկ վարդապետի սենյակում ու պարապում է մատենադարանում՝ Գարեգին վարդապետի հետ միասին... Շենքեր՝ նորանոր այստեղ, այնտեղ ցրված՝ քարակոփ, բայց ներքին շենքերը՝ վանքի գործերը՝ ավերակ են։

Ես էլ հազիվ եմ ելել այս ճահճից. ո՞ւր եմ գալու։ Սույնիսկ մեկ բերան դասացին, թե ինչո՞ւ չես գալիս, ինչո՞ւ չես մնում. վանքի երգեցողությունը գյուղականեն վատ է։

Իմ գործերս Կ. Պոլսում շատ լավ են. աշակերտներ եմ պատրաստում, որ բեռս թեթևացնեմ»[7]։

Այս նամակները հնարավորություն են ընձեռում պարզելու Կոմիտասի հետ կապված մի քանի կարևոր հարց։ Դրանցից առաջինը էջմիածին վերադառնալու հարցն է։ Կասկածից վեր է, որ Կոմիտասը ներքուստ պատրաստ է եղել այն բանին, որ եթե պաշտոնապես նրան հրավիրեն և պայմաններն էլ փոխված լինեն, ապա ինքը հաճույքով այդ հրավերը կընդուներ։ Բայց, դժբախտաբար, վանքում դրությունը չէր փոխվել, ոչ մի բարենպաստ պայման չէր ստեղծվել և նախկին հակառակորդները մնացել էին իրենց տեղերում. ո՛չ կաթողիկոսը և ո՛չ էլ վանքի գործերը գլխավորողներից մեկը թեկուզ կիսաբերան չհրավիրեցին Կոմիտասին՝ վերադառնալ էջմիածին։ Եվ քանի որ վանքի գործերն ավերակ էին ու նախկին ճահիճը շարունակում էր իր գոյությունը, հետևությունը պարզ է. «Ես հազիվ եմ ելել այս ճահճից. ո՞ւր եմ գալու»։

---

7 «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 265—266։

Երկրորդ հարցը վերաբերում է վանքի երգեցողությանը։ Հայտնի է, թե Կոմիտասի աշխատած տարիներին որքան մեծ բարձրության վրա էր գտնվում երգ-երաժշտությունն ինչպես Գևորգյան Ճեմարանում, այնպես էլ Մայր տաճարում։ Իսկ այժմ, ծանոթանալով դրությանը, Կոմիտասը ցավ ի սիրտ արձանագրում է, որ «վանքի երգեցողությունը գյուղականին վատ է»։ Երաժշտության փոխարեն տիրապետում է «ժխոր, աղաղակ, խառնակաձայն, տգետ... երգեցողություն»։ Էլ ի՞նչը նրան հրապուրեր և ետ բերեր էջմիածին, մանավանդ որ իր ընկերներն առաջվա նման գտնվում էին աննպաստ պայմաններում։

Ահա այս բոլորի հետևանքով Կոմիտասն ստիպված էր որոշում ընդունել Պոլիս վերադառնալու մասին, որը և ճակատագրական եղավ նրա կյանքում։ Երկու տարի անց նա ենթարկվեց թուրքական կառավարության վայրագություններին, բանտարկվեց ու աքսորվեց Անատոլիայի խորքերը, ականատես եղավ հայ մտավորականության խոշտանգումներին, հոգեպես ցնցվեց և ի վերջո զրկվեց բանականությունից։

Երրորդ հարցը վերաբերում է Կոմիտասի այցելության բուն նպատակին՝ մատենադարանում աշխատելուն և շրջաններում ժողովրդական երգեր հավաքելուն։ Ապրելով և աշխատելով Պոլսում, Կոմիտասը թեև շարունակում էր խազերի ուսումնասիրության բնագավառում սկսած իր հետազոտական աշխատանքները· բայց զգում էր, որ իրեն պակասում են էջմիածնի մատենադարանի խազգրքերը, որոնց վրա տարիներ շարունակ աշխատել էր ինքը և հասել որոշակի արդյունքների։ Դեռ 1909 թ. ապրիլի 15-ին էջմիածնից գրած իր նամակում նա գոհունակությամբ հաղորդում էր Ա. Զոպանյանին, որ ինքը գտել է հայոց հին խազերի բանալին և սկսել է կարդալ պարզ եղանակները[8]։ Սակայն ղրանով իր աշխատանքն ավարտած չէր համարում և ավելացնում էր. «Այս ամռան ուզում եմ մի քանի շաբաթով նախքան հայրենիք գնալս անցնել Երուսաղեմ և մի քանի կարևոր ձեռագրեր ուսումնասիրել, որ գործն շտապով առաջ տանեմ։ Հետո մանրամասնաբար քեզ կհաղորդեմ»։

Սակայն նրան այնպես էլ չհաջողվեց Երուսաղեմ գնալ և այդ կարևոր ձեռագրերն ուսումնասիրել։ Ըստ երևույթին Պոլիս փոխադրվելուց հետո նա չկարողացավ ըստ ամենայնի զբաղվել խազերի ուսումնասիրության հարցով։ Այդ է պատճառը, որ խոստացած մանրամասնությունների հաղորդումն այնպես էլ տեղի չունեցավ։ Էջմիածին գալով, նա իսկապես աշխատեց մատենադարանում, բայց կոնկրետ ինչ արեց խազերի ուսումնասիրության գծով, մեզ համար մնում է անհայտ։ Ինքն այդ մասին չի գրել իր բարեկամներին և ոչ էլ հանդես է եկել մամուլում։ Միակ բանը, որ նա հաղորդել է մամուլի էջերում, դա Պոլսում լույս տեսնող «Տաճար» կիսամսյա հանդեսի խմբագրությանն ուղղված նամակի հետևյալ տողերն են.

«Իրավ է, ես գտել եմ հայ խազերի բանալին և նույնիսկ կարդում եմ պարզ գրվածքները, բայց դեռ վերջակետին չեմ հասել, զի յուրաքանչյուր խազի խորհրդավոր իմաստին թափանցելու համար, նույնիսկ տասնյակ ձեռագիրներ պրպտելով, երբեմն ամիսներ են սահում։ Իսկ ձեռքիս տակ եղած խազերը»

8 Տե՛ս նույն տեղում, էջ 259։

այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առայժմ, մի կողմ թողնենք դեռ անանուն խաղերը, որոնք խիստ շատ են»[9]։

Իր այս հայտնի նամակի վերջում նա ավելացնում է. «Թող հայ հասարակությունը ներող, մանավանդ համբերող լինի, մինչև որ հնարավոր չափով, կատարելապես վերջացնեմ իմ տասնվեցամյակից ավելի տևող տաժանագին ուսումնասիրություններս։ Հույս ունեմ թե մոտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակության սեփականություն պետք է դառնա»։

Ի՞նչ եղան Կոմիտասի այս հատորները, ո՞ւր անհայտացան՝ մնում է առեղծվածային։ Համենայն դեպս ո՛չ Երևանի կոմիտասյան արխիվում և ո՛չ էլ Փարիզի կոմիտասյան խնամատար հանձնաժողովի գործերում դրանք չկան։ Մեծ բախտավորություն կլիներ հայ ժողովրդի համար, եթե այդ հատորները հայտնաբերվեին և դառնային ժողովրդի սեփականությունը։ Չէ՞ որ այդ թանկագին կորստի պատճառով այսօր էլ խաղերի բարդ, խճճված ու դժվարին պրոբլեմը նույնությամբ կանգնած է հայկական երաժշտագիտության առջև ու հրամայողաբար պահանջում է իր լուծումը։

Այժմ անդրադառնանք ժողովրդական երգերի ձայնագրման հարցին։ Ինչպես հայտնի է, այս գործով նա զբաղվել է դեռ Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներից։ Երաժշտության դասատուների օգնությամբ նա կատարելապես տիրապետել էր հայկական նոր ձայնագրությանը կամ Լիմոնջյանի սիստեմին և վաստակելով «նոտաջու» համբավ, սկսել էր ձայնագրել հայ ժողովրդական երգեր։ Այս տարիների նրա ձայնագրած երգերն ամփոփված էին մի ձեռագիր ժողովածուի մեջ, որը թվագրված է 1891 թ. և պարունակում է 37 երգ։ Սա Կոմիտասի անդրանիկ ժողովածուն էր, կազմված արտակարգ սիրով ու բարեխղճությամբ։ Այստեղ ամփոփված երգերը զուտ գեղջուկ երգեր են, որոնք նա լսել էր էջմիածնում ու շրջակա գյուղերում, ուր նա լինում էր ամառային արձակուրդի ամիսներին, հաճախ իր դասընկերների հետ միասին այցելելով նրանց հարազատներին։

Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո Կոմիտասն ավելի լայնորեն ու սիստեմատիկ կերպով զբաղվեց ժողովրդական երգերի ձայնագրման գործով։ Ընդ որում իր բոլոր ձայնագրությունները նա կատարում էր հայկական նոր ձայնագրության սիստեմի օգնությամբ, որովհետև այն չէր պահանջում նոտային թուղթ, բանալիի մոտ դրվող նշաններ և այլն, կարող էր գրվել սովորական թղթի վրա, տետրում կամ ծոցատետրում, այն էլ մեծ արագությամբ։ Հետևապես ձայնագրության այդ սիստեմը Կոմիտասն օգտագործել է որպես սղագրության միջոց։ Բայց հետագայում, անցնելով այդ երգերի մշակմանը, ստեղծելով իր գողտրիկ մեներգերը, խմբերգերը և դաշնամուրային պարերը, նա մշտապես դիմել է եվրոպական նոտագրությանը, որպես առավել կատարյալ և բոլոր ժողովուրդներին մատչելի սիստեմի։

Հայտնի է նմանապես, որ իր գործունեության ընթացքում Կոմիտասը ձայնագրել էր ավելի քան 4.000 ժողովրդական երգ, բայց հնարավորություն չէր ունեցել դրանք հրատարակել։ Բացառություն են կազմում Ակնա ժողովրդական երգերը (թվով 25), որոնք տպագրվել են Հ. Ճանիկյանի «Հնությունք Ակնա» գրքում, որպես երաժշտական հավելված և քրդական երգերի փոքրիկ ժողովածուն (13 երգ), որը լույս է տեսել Մոսկվայում, 1904 թ., որպես «էմին-

9 «Տաճար», Կ. Պոլիս, 1910, № 10, էջ 311։

ծուի» մեջ լրացված են կազմողի՝ երաժշտագետ-կոմպոզիտոր Մուշեղ Ադայանի կողմից։

Նշված ժողովածուն հետաքրքիր է ոչ միայն իր պարունակած երգերով, այլև նրանով, որ հնարավորություն է տալիս ամբողջական գաղափար կազմելու Արարատյան հարթավայրի թվարկված շրջանների գեղջուկ երաժշտության մասին, քանի որ ձայնագրությունները կատարված են մեկ այցելության ընթացքում։ Բացի այս, այդ ժողովածուի մեջ մենք հանդիպում ենք նախորդ տարիներին կատարված ձայնագրությունների նոր տարբերակների, որոնց համեմատական ուսումնասիրությունը կարող է հարուստ նյութ մատակարարել ժողովրդական երգաստեղծության մեջ տեղի ունեցող պրոցեսների մասին։

Հետաքրքիր է այն, որ չնայած իր արտակարգ զբաղվածությանը, Կոմիտասը հասցրել է այս ծոցատետրի երգերից շատերը մշակել որպես խմբերգեր։ Այդ երգերից են, օրինակ՝ «Աղջի, անունը դ Շուշան», «Գյուլ հա, գյուլ հա», «Կալերի ճամփեն դուզ ա», «Բաղչի պատը դդում ա», «Սարը կրակ եմ արել», «Թազա մածուն եմ մերել», «Պուճուր աղջիկ, սևավոր», «Հոյ իմ նազանի յարըս», «Սարեն կուգա ջուխտըմ ղոչ», «Ալագյոզ աչքերըդ», «Երևան բաղ եմ արել», «Սև ա չոբանի շունը» և այլն։ Սրանք, իհարկե, մնացել են ձեռագիր և նախապատրաստվում են հրատարակության արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Աթայանի կողմից ու լույս կտեսնեն Կոմիտասի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության հերթական հատորներում։ Դրանք, անկասկած, լրացնում են Կոմիտասի խմբերգային ստեղծագործության դանձարանը։

Այսպիսով, Կոմիտասի վերջին այցելությունը Հայաստան եղավ շատ արդյունավետ։ Երկու ամսվա ընթացքում նրան հաջողվեց աշխատել մատենադարանում, շրջել Հայաստանի տարբեր շրջանների գյուղերը, շփվել հարազատ ժողովրդի հետ, լսել ու ձայնագրել հայ գեղջուկ երգեր, ծանոթանալ էջմիածնի Մայր տաճարի վիճակին, հանդիպել իր ընկերներից ու բարեկամներից ոմանց և ստանալ իրեն հետաքրքրող ամենակարևոր հարցերի պատասխանը՝ արդյոք փոփոխություններ կատարվե՞լ են դեպի լավը, պայմաններ կա՞ն իր վերադարձի համար և իր վերադարձը ցանկալի՞ է հոգևոր պետերի համար։ Ստանալով բացասական պատասխան, Կոմիտասը ճանապարհ ընկավ դեպի Կոստանդնուպոլիս և այլևս չվերադարձավ։ Նա Հայաստան բերվեց միայն 23 տարի անց, այն էլ որպես սրբազան մասունք և թանկագին աճյուն՝ ամփոփվելու հանրապետական պանթեոնում ու ձուլվելու հարազատ հայրենի հողին։

ծուի» մեջ լրացված են կազմողի՝ երաժշտագետ-կոմպոզիտոր Մուշեղ Աղայանի կողմից։

Նշված ժողովածուն հետաքրքիր է ոչ միայն իր պարունակած երգերով, այլև նրանով, որ հնարավորություն է տալիս ամբողջական գաղափար կազմելու Արարատյան հարթավայրի թվարկված շրջանների գեղջուկ երաժշտության մասին, քանի որ ձայնագրությունները կատարված են մեկ այցելության ընթացքում։ Բացի այս, այդ ժողովածուի մեջ մենք հանդիպում ենք նախորդ տարիներին կատարված ձայնագրությունների նոր տարբերակների, որոնց համեմատական ուսումնասիրությունը կարող է հարուստ նյութ մատակարարել ժողովրդական երգաստեղծության մեջ տեղի ունեցող պրոցեսների մասին։

Հետաքրքիր է այն, որ չնայած իր արտակարգ զբաղվածությանը, Կոմիտասը հասցրել է այս ծոցատետրի երգերից շատերը մշակել որպես խմբերգեր։ Այդ երգերից են, օրինակ՝ «Աղջի, անունը դ Շուշան», «Գյուլ հա, գյուլ հա», «Կալերի ճամփեն դուզ ա», «Բաղչի պատը դդում ա», «Սարը կրակ եմ արել», «Թազա մածուն եմ մերել», «Պուճուր աղջիկ, սևավոր», «Հոյ իմ նազանի յարըս», «Սարեն կուգա ջուխտըմ ղոչ», «Ալագյոզ աչքերըդ», «Երևան բաղ եմ արել», «Սև ա չոբանի շունը» և այլն։ Սրանք, իհարկե, մնացել են ձեռագիր և նախապատրաստվում են հրատարակության արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Աթայանի կողմից ու լույս կտեսնեն Կոմիտասի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության հերթական հատորներում։ Դրանք, անկասկած, լրացնում են Կոմիտասի խմբերգային ստեղծագործության դանձարանը։

Այսպիսով, Կոմիտասի վերջին այցելությունը Հայաստան եղավ շատ արդյունավետ։ Երկու ամսվա ընթացքում նրան հաջողվեց աշխատել մատենադարանում, շրջել Հայաստանի տարբեր շրջանների գյուղերը, շփվել հարազատ ժողովրդի հետ, լսել ու ձայնագրել հայ գեղջուկ երգեր, ծանոթանալ էջմիածնի Մայր տաճարի վիճակին, հանդիպել իր ընկերներից ու բարեկամներից ոմանց և ստանալ իրեն հետաքրքրող ամենակարևոր հարցերի պատասխանը՝ արդյոք փոփոխություններ կատարվե՞լ են դեպի լավը, պայմաններ կա՞ն իր վերադարձի համար և իր վերադարձը ցանկալի՞ է հոգևոր պետերի համար։ Ստանալով բացասական պատասխան, Կոմիտասը ճանապարհ ընկավ դեպի Կոստանդնուպոլիս և այլևս չվերադարձավ։ Նա Հայաստան բերվեց միայն 23 տարի անց, այն էլ որպես սրբազան մասունք և թանկագին աճյուն՝ ամփոփվելու հանրապետական պանթեոնում ու ձուլվելու հարազատ հայրենի հողին։